

աւելի ուժեղ և գիտակից տողեր իբրև նոր Սիամանթոյ մը, քան հեշտաբեր արաբական ծուխը կամ Չախսէի արիւնոտ թափօրը:

Նոյնը աւելի իրաւունքով պէտք է ըսել իր բանաստեղծութեանց վերջին դրուագի մասին, ուր հոգեբանական խոր ըննութիւն չկայ, այլ արտաքին շարժումներ և գարմանքի հարցումներ. իր զրուցեան մէջ չէ տեսած մեր ազգային կենսական վիճակը, մեր գաղափարներուն և յոյսերուն բախումը Բարիզի տխուր իրականութեան հետ: Վերջապէս այս անարիւն մարտիրոսութիւնը զինքը չէ հետաքրքրած և կը խոստովանի թէ չէ ուսումնասիրած և չի գիտեր: Մինչդեռ լայն վրձինով մը պէտք էր փակել իր ճամբորդութիւնը փոխանակ փետտուած հաւի պէս անբարոյ պառաւի մը ձեռքն իյնալու:

Ոստանիկի զարգացումը միջազգային գոյն մը չունի և կամ գէթ անոր ցոլացումը չկայ իր երկին մէջ. իրեն կը պակասին բառերու ընտրութիւնը, ոճի պարզութիւնը և գաղափարներու դասաւորում. արդէն բառամթերքը աղքատ է, և աշուղական ուղղութեամբ գրելը այդ տկարութիւնը կը մատնէ: Ակնյայտնի կը տեսնուին սակ իր կրած ազդեցութիւնը հայ հեղինակներէ. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» ն ամբողջութեամբ ձուլուած է հայրենակարօտ մասերուն մէջ, իսկ բովանդակ գիրքը կը հետեւի Ա. Իսահակեանի հետքերուն՝ թէ զգացումի և թէ պատկերներու մէջ:

Սակայն «Արեւելքէն Արեւմուտք» ի մէջ կայ եզակի խորք մը, ինքնուրոյն թարմութիւն մը և աւանդական եղած բանաստեղծական ասացուածքներէ ձերբազատուելու ճիգ մը՝ որ ցոյց կու տայ հեղինակին իսկական շնորհք ու տաղանդ ունենալը:

Բառամթերքի ազդատուութեան քով՝ լեզուի խեղճութիւնը, անկանոն քերականութիւն: Ապագան պիտի ըննադատէ նաև Ոստանիկի քերթողական թուլութիւնը՝ որուն այնքան ալ նպաստաւոր չէ արեւե-

լահայ մեր բարբառը, որ եթէ լաւ չմշակուի՝ թափթփուկ միջնադարեան գոյն կու տայ բանաստեղծութեան:

Ինչ որ էական է՝ տաղանդ և ներշնչում՝ Ոստանիկի քով լիուլի կայ և ան իր չնչին թերութիւններով հանդերձ սահմանուած է ըլլալ մեր կարկառուն դէմքերէն մին:

Հ. Վ. ՅՈՎ. ՀԱՅՏԵՆԵՍԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ

Սշխարհիքէզ Բալամթարի.
Երևան, 1931, Պետհրատ:

Հեղինակը կամ աւելի ճիշտ խմբագրողն եղած է Աշխարհիքէզ Քալանթար՝ հմուտ և տաղանդաւոր գիտնականը, որ Հայ Հն. Պահ. Ժողովի քարտուղարն է միանգամայն:

Գործս աւելի լաւ է նկատել տեղեկագիր մը, ուր ամփոփ կերպով կը գծուի հնախուզական աշխատութեանց պատմութիւնը խորհրդային Հայաստանի մէջ: Այս Յանձնախումբը պետական հաստատութիւն մըն է Լուսժողովուարին ենթակայ: Ա. Քալանթար կը տեղեկագրէ Յանձնախումբի պեղման, հնութեանց և յիշատակարաններու պահպանման, վերակառուցման աշխատութեանց վրայօք, զորս ան կատարած է Խ. Հայաստանի մէջ 1920-1930 տարիներու ընթացքին:

Արտասահմանի հայութեան գիտական և հետաքրքիր դասակարգը կրնայ կատարեալ և ամփոփ գաղափար մ'ունենալ, այս պրակին ընթերցումով, գիտական գիտերուն և հետախուզութեանց մասին՝ որոնք Հայաստանի մէջ կատարուած են, և հնախօսական-պատմական հանգամանք ունին:

Հրատարակութիւնը արտասպում մ'է: Դժբախտաբար տպագրութիւնը խեղճ է և թուղթը հասարակ:

Իսկ իբր զլիաւոր գիտողութիւն հայագիր բառերն են որոնց թարգմանիչ հայերէն գեղեցիկ բառերն ունինք: Նախ

կովտե բառը՝ որուն աւելի հաճելի գանազան բառերն ունինք հայերէն: Գ. էջին մէջ կուլտուրայ (մշակոյթ), որգան (մարմին), դեկրետ (հրամանագիր), իսկ անդին՝ տեխնիկական և սիստեմատիկ բառերն Ա. Քալանթարինը չեն, այլ պետական հրամանագրէն առաջ բերուած: Հրատարակութեան մէջ դժբախտաբար դիւրաւ կարելի է գտնել կոմիտէի, ֆունկցիաների, մշակուած պլան (ծրագիր), տեխնիկական, տեստավրացիաներով, սիստեմատիկ, minimumը կոնկրետ (նուազագոյնը հաստատուն), պրոպագանդ, եքսպոսիցիա, ռեզիստանցիան, եստամպահանում, հիւրողլիֆ, պալեոլիթին, տրեպանացիա, եստամպատ, կլասիկ տիպ, ֆրեսկոներ, պալեոնտոլոգիական, պլիոցեն, գիպսից, տեխնոլոգիայի լարորատորիաներ, ցեմենտ,

եվոլուցիան, կորպուս, կուլ, տոպոկրաֆիան, Էւն. Էւն.:

Չարմանալի է որ ազնիւ հեղինակը այս ամենուն ալ կամ զոնէ մեծ մասին հայերէն բուն բառերն ալ գործածած է անդ՝ այլուր: Ասիկա խրտչեցնող բան է, որ զոնէ Հայաստանի մշակոյթով զբաղող պետական մարմնի մը քարտուղարն չի սպասուիր, մանաւանդ երբ այդ քարտուղարը Աշխարհիքէզ Քալանթարի նման մեծ կարողութեամբ իրապէս գիտնական հայորդի մըն է:

Այս պարագան Հայաստանի կրթութեամբ ու մշակոյթով զբաղողներուն ու շարժութեան կը յանձնեմ. թերութիւն մը՝ զոր դիւրաւ կարելի է սրբագրել ըիչ մը ջանքով:

Ուրջիթա Գամգաս

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Հ Ա Յ Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Ի Ս Ը Գ Ի Ի Տ Ը

Սօֆիա հրատարակուող պուլկարերէն «Պատկերագարը Շարաթաթերթ»-ը իր Դեկտեմբեր 11 թիւով կը խօսի նոր գիւտի մը մասին, որուն հեղինակն է պուլկարահայ երիտասարդ մը, Պ. Հենրիկոս Անդրէաս Յակոբեան, որ երկու տարի առաջ աւարտեց Վենետիկի Մուրատ Ռափայէլեան վարժարանը:

Պ. Հ. Յակոբեանի կատարած գիւտը օղասայլ մ'է, որ շարժման մէջ կը զրուի հեծնողին ոտքերուն ուժովը: Մեքենային կառուցուածքը հիմնուած է լծակներու

դրութեան (sistema delle leve) վերաբերեալ Արքիմեդէսի սկզբունքին վրայ: Բարձրացուցիչ ուժը և կառքին օղին մէջ մնալը կ'ապահովուին երկու պտուտակներով՝ որոնք մէկ վայրկեանի մէջ 1000-2200 շրջան կ'ընեն:

Տեսական հաշիւներուն համաձայն՝ 12 ձիու ուժի կը հասնի կառքին կարողութիւնը:

Կառքը կոչուած է «Օդային երկանի»: Ճրանսական Տուն մը առաջարկած է գնել մեքենային մենաշնորհը (brevet):

Յ. ԵՐԿՍԵԱՆ